

Պուարթ և ուրախ մարդիկն աշխարհիս իս-
կական տիրողներ են որովհետեւ աշխարհը նո-
ցա է պատկանում ով գիտէ նորան վայելելը
ԽՈՐԷՆ Ծ. Վ. ՍՏԵՓԱՆԷ
(Շարունակելի):

Խ Ո Ր Դ Ի Ռ Ե Ր Ը.

(Քաղաքացի. Բեռլին ամսագրի № 11 93 թ.)



Ե՛հ և բարձր հոգին արհամարհում է
ամեն ինչ՝ որպէս-զի ամեն բան ընդ-
գրկէ:

Մարդավարութեան օրէնք է, որ իւրաքան-
չիւր մարդ՝ առանց չափելու նրա զարգացման
աստիճանը՝ իրաւունք ունի իր մտածմունք-
ները և դատողութիւնները հաղորդել հասար-
ակութեան՝ մարդ-եղբայրներին և հասարա-
կութիւնը բարեհաճ և համբերատար ուշադ-
րութեամբ լսում է իր անդամին, օգտւում է
նրա խելօք մտքերից, իսկ անհիմն խօսքերը
թողնում է առանց ուշադրութեան: Այդտեղ
ազատաբար խիղճը կատարում է իր դերը, վա-
սըն դի տիրող վեհ և բարձր հոգին չի խրատ-
ւում մանր մունր բաներից և թող է տալիս
ամեն մտքի պարզաբար արտայայտւելու. խիղ-
ճը և միտքը ամենամօտ առնչութիւն սունին
իրար հետ:

Իսկ մեր մէջ որպէս մի խիստ տգէտ հա-
սարակութեան մէջ՝ բռնաբարւում է միտքը
բռնաբարւում է խղճի ձայնը կուսակցական շա-
հերի համար: Եւ ահա երբ երևում է մի վեհ
հոգի՝ մի մեծ մարդ, որով այնքան ազգասէ
մեր կեանքը, մի բարձր հոգի՝ կրկնում են որ
ընդունակ է իր կեանքի մի մասը մեզ ներշն-
չել հասարակութիւնը անխտիր կերպով պար-
տաւոր է, մեզ թւում է, պատկառելի ուշադ-
րութիւն նուիրել նրան, ջանալով թափան-
ցել նրա մեծ հոգին և իւրացնել նրա վե-
հութիւնը, լայնարձակ համբերութիւնը և
հշտ ընկերական բարեհաճութիւնը:

Ով կուզէ լինի մեծ մարդը՝ նա ժողովրդա-

կան նուիրական սեպհականութիւնն է, հասար-
ակութիւնը պատասխանատու է նրա համար
պատմութեան առաջ: Միան պատճառած միջ-
տըն ու ցաւը կը ծանրանայ և սե բծի պէս
կը դրոշմուի մեր խղճի վերայ: Արող էք չը-
հնազանդել մեծ խօսքին, եթէ ձեր խելքը և
խիղճն այդ արգելում են բայց նախ և առաջ
լաւ քննեցէք և համոզուեցէք՝ չը լինի թէ ան-
խելքութիւնը և անխղճութիւնն են թելադր-
ում այդ ձեզ:

Իմացէք, որ մեծ հոգու տէր՝ քանքար ու-
նեցող մարդու համար դէթ ճանարտութեան
կէսը մատչելի է, իսկ հասարակ մահաւանջու-
ների համար մատչելի չէ նրա և ոչ իսկ հա-
րիւրերորդ մասը, բացի դրանից՝ նա ունի
ահաղին խելք, նա միշտ տալիս է իւր սեպ-
հականը և տալիս է անկեղծաբար, և զրանք
են իսկական հանձարի նշանները: Ինչ միտք
էլ որ նա չը յայտնէ՝ մեզ միշտ նոր է թը-
ւում թէպէտ շատ մտածողներ նոյնը ասած
լինին, բայց բան այն է, որ հանձարն ինքն է
անմիջապէս տեսել նկատել մտքերը և գաղա-
փարները մեր համար անտեսանելի աշխարհ-
ներում և ինքն է կեանք տուել այդ մտքերին
և գաղափարներին: Եւ յիշուի, մեծ հոգիների
կոչումն է ոչ թէ ստեղծել նոր մտքեր, այլ
յարութիւն տալ այն մտքերին, որոնց խեղ-
տել մոռացութեան է տուել ամբոխը: Մի
սկանաւոր մատենագիր տալ է՝ թէ գեղեցկու-
թիւնն է ամենամեծ մարդասիրութիւնը, յի-
շուի, գեղեցկութեան միջոցով է, որ հեշտու-
թեամբ մարդիկ կարողանում են տեսնել ճշ-
մարտութիւնը, իսկ ամենամիտքի մասով ճշ-
մարտութեան վերահասու լինելն է աղբիւր
սիրոյ և բարութեան:

Սակայն բացի գեղազիտական շնորհքից և
նշանաւոր խելքից՝ կայ զարձեւող մի մեծ գոր-
ծօն պարագայ՝ այն է խիղճը: Խղճի գերը
հրաշալի է, ստեղծագործական հանձարի վրայ
այնքան ճառելով, չը պիտի անուշաղիր թող-
նել և խղճի կատարած գերը, զարգացած,
զգայուն խիղճը այնքան պօրաւոր և հզօր է՝
ինչքան և հանձարը:

Մարդեր խիղճն անհրաժեշտ է անպայման, որպէս զի գեղադէտ քանքարաւորը կարողանայ իդէալական բարձր և վեհ դիրքի վրայ կենալ՝ զերծ լիտի ստորութիւնից և կոշտ կոպտութիւնից: Մարի ոլորաներում խիղճն էլ աւելի մեծ հրաշքներ է կատարում մարդիկների աշխարհային յարաբերութիւնների մէջ հասարակ և սովորական խելքը՝ եթէ, զինուորում է խղճով՝ հանձարեղութեան աստիճանին կարող է հասնել: Այս բարձրագոյն բարիքը՝ խիղճը՝ պայծառապէս երևոյթանում է շատ հազիւ, աւելի պակաս անգամ քան զեղադիտական տաղանդը և ուժեղ խելքը և սակայն նա է մարդկային կարեւորագոյն պահանջը և նրանով ամեն բան կը լուծուի: Այն դրողը, որ ունի վառ խիղճ և ճարտար գրելու քանքար, նրա խօսքերը երկնային, չքնաշխարհի մի տեսակ խորհրդաւոր են, բնութեան և կեանքի ձայնն են: Միշտ պէտք է լսել այդ ձայնին և եթէ, դրա մէջ մեր համար լինի մութ կամ մեզ տակն ու վրայ աւելի մի բան, պարտաւոր ենք աւելի խոր և երկար մտածել՝ նա է սխալում արդե՞ք, որ կանգնած է այն բարձր դագաթի վրայ և տեսնում է անընդդիմելի հեռաւորութիւնը անհուն հորիզոնի, թէ մենք ենք թարթափած սխալանքների տիղմի մէջ, մենք՝ լեռան ստորոտում՝ մեր պաշտած կուռքերով մանր-մունրը բերկրանքներով և տխրութիւններով: Ուրաքանչիւր մարդ միայն մի կեանք ունի և այդ կեանքն էլ նա անցուցանում է տանջանքների և անասելի ստորութիւնների մէջ, այս բանը ամեն մարդ քաջ դիտակցում է, բայց խեղճ խելքի տէր և մանաւանդ թող խղճի տէր մարդիկ շուտով մտքից ձգում են և հեշտ կերպով սփռում են իսկ զղայուն մարդիկ մտածում են զուր անցնող կեանքի վրայ: Աշխարհ մտնելով երջանկութեան ցրնորքներով ճշմարտութեան տենչով, կեանքի գեղեցկութեան խղճով, բարձր հոգի ունեցողը, տեսնում է իրեն մի մոռյալ անդունդի մէջ, ուր տիրում է խառնաշփոթ կռիւ, ընկճուածների անլուելի կոծը և յաղթութեան ձանձրոյթը:

Նա սարսափահար եղած տեսնում է, որ ինքրն էլ խրուած է այդ սոսկալի մարտի մէջ և որ ոչ միայն ինքն է սեղմում ուրիշներից, այլ և ինքն էլ ակամայ ձնշում է ուրիշներին, նա տեսնում է զոհերի մի անսահման ասպարէզ լցուած ջախջախուած և ոտնահար եղած կեանքով: Բայց աւելի սարսափելին այն է, որ նա տեսնում է ինչպէս անցնում են տարիները, երիտասարդութիւնից նա հասնում է կատարեալ հասակին, վերջապէս նա ծերանում է, ոսկի կեանքի չնչին պաշարն սպառւում է, իսկ մեծ կռիւը դարձեալ շարունակւում է, ազահութեան, ստութեան, ցոփութեան կռիւը և նա՝ այն մեծ ծերունին, կաշկանդուած է այդ խաւարուէին դժբերով: Մեծ հոգիները դիտելով այդ ամենը՝ մտատանջութիւնից ծիւրւում են և մի ելք են որոնում: Նրանք լարում են իրենց միտքը և սիրտը այդ աւերմունքի առաջն առնելու համար:

Գոյութիւն ունի, անշուշտ, մտածում են նրանք, մարդային դործառնութեան պատճառաւթ և կամ կէտ նպատակի՝ մի վեհագոյն օրէնք, օրէնք մարդկանց եղբայրացնելու համար, նրանց մարդավար դարձնելու: Աստուածակերպ շինելու նրանց բնութիւնը, սրբազան բաղտաւորութիւնը երկրի վրայ հաստատելու համար: — Խիստ ողորում է այդպիսի մարդկանց ոգին և իրենց գերբնական խանդով աղերսանքով դիմում են դէպի Զաւիտեանական և կարողանում են կենդանի մտքի աւքով տեսնել թէպէտ զեռ անմեկնելի բայց ճամբարիտ և անդրդուելի օրէնքը՝ այն է՝ սէր դէպի ընկերը: Ու առաւել իմաստնադոյն և ոչ առաւել պարզագոյն դրանից, տակաւին ոչ մի մեծ հողի՝ չի խորհել և քարոզել մի այլ օրէնք և ահա երեք հազար տարուց աւել է, որ բոլոր մեծ մտածողները իրենց հոգեկան տանջանքներին վախճան են տալիս՝ կտակելով միմիայն՝ թէ սիրեցէք իրար: Ու է ամեն բան, սա է առաջնորդում դէպի վերնադոյն սկզբունքը և դէպի սրբութիւնը, առանց որի երկրաւոր կեանքը շատ տխուր բան է: Այդ օրէնքը նրա մանապէս հաստատուելից, յորի վրայ և այդ



օրէնքը պիտի ղեկավարէ առանց բացառութեան մարդկային բոլոր դորձառնութիւններն այդ օրէնքը ստիպում է ամեն բոլոր հարցները մեր ներքին դատաւորին՝ խղճին՝ մեր արարքներին համար՝ որոնք մեզ թւում են արդար՝ մինչդեռ նրանք անխղճմտանք են և զրգուելի:


Խիղճը պիտի հսկէ մեր մտածողութիւններին՝ մեր սիրտը՝ մեր աշխատութիւնների վրայ՝ արդէ եթէ խղճի դատաստանին ենթարկենք «լինողունում»՝ զազաւարներից շատերը և շատ տեսակ մարդկային աշխատութիւններ, — մենք կը տեսնենք, որ նրանք թւում են թէ բարձր են և պիտանի, այլ իսկապէս են անխիղճ՝ անարդար՝ փնասակար և աւելորդ: Օրինակի համար՝ Արեւմտեան Եւրոպայում աշխատաւորները գելալուեստի և ձեռագործի կատարեալ ճարտարութեամբ մեծ և մանր զանազան տեսակ կուռքեր են շինում, որպէս զի Չինաստանի, Հնդկաստանի և այլ տեղերի հարիւրաւոր — միլիոնաւոր կուսպաշտ ամբօխի վրայ ծախեն, չահ ստանան: Ի հարկէ, այդ աշխատանքը անիծեալ է, վասն զի ինչ սոսկալի բան է մտածել, որ լուսաւորութեան հրաշալիքները՝ շողին, էլէքտրականութիւնը, քիմիան ծառայում են կուռքեր շինելու, կրթութեամբ խիղճը պիտի բողբոխ այդպիսի աշխատութեան դէմ և արգելի դրան:

Կամ ի՞նչ պիտի ասէ խիղճը այն բանի դէմ, որ խաղաղութեան և լուսաւորութեան երկրներում մարդկանց ոյժի ամբողջ երրորդ մասը զբաղուած է մարդիկ կոտորելու հրազենների պատրաստութեամբ: Շատ տաղանդաւոր մարդիկ իրենց նուիրում են խեղճերին պաշտպանելու, բայց աւելի շատ և աւելի զօրեղ մարդիկ զբաղուած են զայթակեցուցիչ հաստատութիւններով, տեսարաններով, ցնորական շոյլութիւններով հարստահարելու վայրակ կերպով տգէտ ամբօխին և իսպառ փշացնելու նրան բարոյապէս և նիւթապէս: Այդպէս էլք լինի, եթէ վառ խիղճը լինէր մեր ղեկավարը մեր ամեն գործառնութիւնների մէջ: Այդպէս կը լինի քանի որ

դաստիարակութեան ամբողջ ոյժը սպառուած է աշակերտի ուղեղի վրայ՝ իսկ նրա հոգեւոր և սրտի կրթութեան վրայ հազիւ թէ մի խօսք է լինում: Եկեղեցու հասարակական կրթութիւնն էլ թուշացած է, ժամանակ է, որ մեր կեանքը կազմակերպենք խղճի համաձայն, այդ մենք պարտաւոր ենք և կարող ենք անել: Բաւական է, որ եսական բաղտաւորութեան զազաւարից հրաժարուենք. եսական բաղտաւորութեան հիմքը չարութիւնն է, վասն զի եսական բաղտաւորութիւնը ձգտում է լինել «մէնէ» հարուստ, ուժեղ, տիրող բոլորին, հարստահարող բոլորին և անամօթ կերպով դա կոչում է մրցումն մինչդեռ դրանից ծագում է նախանձ, քարասարտութիւն, ստելութիւն: Ո՞չմարիտ ու առողջ բախտաւորութիւնն այն է, որ մարդ իրեն լաւ է զգում երբ դիմացինն էլ բարի, սիրալիք և պատրաստ է իրեն հաճութեամբ ձեռք տալու, օգնելու, ինքն էլ նրան:

Կենդանի խիղճը հղօր է քան հարստութիւնը, տաղանդը, զեղարուեստը, գիտութիւնը և քաղաքականութիւնը:

Ն. ՏԵՐ. ԱՒԵՏԻՔԵԱՆ.



Մ Ր Մ Ո Ւ Ն Ջ Ք

Ի ՅԻՇԸՏԱԿ ՏՕՆԻ ՍՐԲՈՅ ՂԵՒՈՆԴԵԱՆՅ

Ո՞վ ես գու, նոր Եղիազար քաջափառ,
Հոգի նախանձաւոր և հանգիստգիր,
ԶԽաչն ի յուսգ առեալ, զԱւետարան ի գիրկդ,
Վազես երթաս վկայել վասն Յիսուսի.
Քեզ ոչ ինչ փոյժ է թողուլ զպատարագն ի սեղան
Թողուլ զերախայն յաւազանին մկրտարան,
Թողուլ զհարսն ի քօղ և փեսայն ի պսակ.
Ո՛հ, միթէ գոյժ եհաս քեզ ի վանանդ,
Թէ մոխրապաշտ Մոգք հասին մօտն ի Հայաստան,
Յազկերտ հրամայէ, քակին Եկեղեցիք, շինին
Ատրուշանք.
Ելցէ Յիսուս ի տաճարէն, մտցէ Որմիզդ ընդ սառան,
Օ՛ն, զինուոր դու զօրավարին՝ Նազովրեցոյ,
Պօսն, Հաւատ և եկեղեցի կոչէ զքեզ ի մարտ.
Գնա՛, դնա՛ և մեռի՛ր,
Ո՞վ սուրբ Աւետիք: